

Յորդութիւն ջուրց ըգնոսին ած, և տանի արդ նահանջ։
 Այլ արքայք նոցին՝ 'ի գրաւ իմ՝ առ 'ի մէնջ շըրջափակ,
 Սակաւուքըն մնացելովք՝ խոց 'ի զինուց կարեվէր,
 Ամենիս սգորին կենացն՝ 'ի գին քաջաբար։
 'ի նանիր անձնատուր լինել զնոսին յորդորեմ.
 Բուռն ըզսուսերաց հարեալ՝ անլուր կան ձայնիս։
 Մինչ զհամակ զօրականն անդ՝ 'ի տապաստ յոտս իւրեանց
 Հուսկ անկետալ տեսին, անզօր զինքեանս անձանց պաշտպանել,
 Զայն առ զօրազլուխն ետուն. զանունս ասացի.
 Անձնատուրք եղեն. յղեցի անդէն առ քեզ զերկոսին.
 Եւ սազմըն գաղարեաց՝ սազմիկ զօրացն՝ 'ի սպառել։

ՊԵՏՐ. ԿՈՌՆԵՑԼ. — Միդ.

Թարգմ. Հ. Արաւած Տիրուեաւ

ՀԱՆԴԵՍ ՊԱՐԵՒԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ

ՄԻՒԹԱՐԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՈՐ Ի ՔԱՂԿԵԴՈՒՆ

« ի կիրակէի (14 յուլիս) տեղի ունեցաւ ի վարժարանի Միսիթարեան Հարաց վենետիկոյ ի Քաղկեդոն պարզեաբաշխութեան հանդեսն։ Այս մեծաշուք հանդիսիս գահազլուխ բազմեր էր Գերերջանիկ կաթողիկոսն Ազարեան, Պատրիարք կաթողիկ Հայոց, Բազմաթիւ ժողովոյն մէջ նշանաւորք էին Պ. Կոման հարկանո, իտալիոյ տէրութեան ընդհանուր հիւպատոն, բազմեալ յաջակողմն Պատրիարդին, և Պ. Մօրանա հրամանատար երեսփոխանն. իսկ ի ձախակողմն՝ Գերապայծառ Տէր Յովհաննիսիան Եպիսկոպոսն Մշց։

Ի մուտաս Գերերջանիկ կաթողիկոսին, Քնար Քաղկեդոնի (Lyre Chalcédonienne) կոշեցեալ երաժշտասէր ընկերութեան խումբն հընչեցուց զշամիտիե քայլերզը, սուզ ինչ յետոյ զիտալականը։ Հ. Արիստակէս Վ. Ղասղանտիկեան նուագ մի կարդաց ի պատի Գերերջ։ Տեսառն. և Գետրոս Ֆէնէկ, համառօտ և գեղեցիկ բանիւք իտալական լեզուաւ՝ ողջունելով զմեծապատիւ Հիւպատոն, չորհակալ եղաւ որ իր ներկայացուցիչ գեղեցիկ և հիւրասէրի իտալիոյ իւր ներկայութեամբն պատուեց զվարժարանը։

Պ. Կոստանդ Գարիքօբուլօ երաժշտութեան հաջակեալ ուսուցիչն կը կառավարէր երգոց մասը, և Պ. Մուրատ Վամանօ դաշնակ կը հարկանէր, և երբեմն երբեմն վերջնոյս առաջնորդութեամբ վերոյիշեալ ընկերութիւնն գեղեցիկ հատուածներ կը հնչեցընէր։

Առաջին դասէն երկու աշակերտք, Վաղարշ Թագւորեան, Գրիգոր Փէճիտեան, և երկրորդէն՝ Ստեփան Տոմինեան, ոսկի միտալ ընդունեցան իրը յամենայնի քան զայլս յառաջադէմք։ Արամ Հիւրմիւղեան, Լևոն Ալանեան, Անտոն Գոյումնեան, Տիգրան Սահակեան, Եղուարդ Մահնուապեան ամէնքն առաջին պարգև ընդունեցան։ Պետրոս Ֆէնէկ և Սիմոնով երկարատև ծափահարութիւն ընդունեցան այլ և այլ հատուածներ երգելով։ յորոց առաջինն մեծ ապագայ մի կը խոստանայ, որուն կրկին երգել տուին Տօն Պրօկոպիօ առանձին երգածը։

Հանդիսին յայտարարութիւնը գովելի եղաւ ըստ կրկին գլխոյ, մի՛ որ անընդհատ նոր և գեղեցիկ փոփոխութիւն կը կրէր, երկրագո՞՞որ այն անտանելի լիրական երգելով։ յորոց առաջինն մեծ ապագայ մի կը խոստանայ, որուն կրկին երգել տուին Տօն Պրօկոպիօ առանձին երգածը։

Այլ և այլ ընթերցումներ եղան ըստ պատշաճի հանդիսին՝ հայերէն, տաճկերէն, գաղղիերէն և անգղիերէն լեզուզք, Յետ պարզեներն բաշխելու, Գերերջանիկ կաթողիկոսն Աղարեան՝ Ստեփան Տոմինեան աշակերտին արծաթեայ գեղեցիկ միտալ մի ընծոյեց, որոյ վրայ քանդակուած էր Լևոն ԺԴ. սրբազն Քահանայապետին պատկերն։

Ի վախճան դպրոցական հանդիսիս, որ մեծ տպաւորութիւն ըրաւ բազմաթիւ հանդիսականաց վրայ, Հոգեոր Ցէրն՝ վայելուչ, պերճախոս և ազդու բանիք խօսեցաւ թէ որչափ երախտագիտութեան պարտք ունին երանաշնորհ Հօրն Մխիթարայ Արքայի և իւր աշակերտաց, Հայոց ազգին անդադար մատենագրական և ուսումնական ծառայութեացն համար, զոր կը դնեմք աստ՚ի Հանդիսիս յընթերցումն փափագողաց։

Ցիշեց ՚ի նմա թէ այս դպրոցական հանդիսին զուգագէպ խիստ լսւ կը յարմարէին հայկական մատենագրութեան կրկին հոչակաւոր Հարց տօնն, Յթ. Սահակայ և Մեսրոպապայ։ Յորդորեց աշակերտներն ի յարատեռութիւն յուստունս, որպէս զի Հայոց ազգն պարծի իւր այնպիսի որդուովք։ Խօսքն կնքեց ըսելով, թէ երջանիկ են ընդ հովանեաւ մեծափառ տէրութեան մեծազօր Սուլգանին Ապտիւլ Համբատ Խանի, իմաստուն պաշտպանին լեզուաց, գիտութեանց և արուեստից։

Յետ բանախօսութեան, հանդէսն լմնցաւ և հանդիսականք ՚ի խօսարան մտնելով, տեսան աշակերտաց աշխատութիւններն ի գեղագրութեան, յուսուագրութեան և ի նկարչութեան, և այլն։ Յուսամք թէ օր ըստ օրէ աւելի ևս պիտի յառաջադիմէ վարժարանն քրտամքը Հարցս, և զնոյն կը հաւասոտէ աշակերտաց փութոյն և եռանդեան օր ըստ օրէ կրկնապատկիլն։

Սատրու, յրագիր։

Մեծաշոք հանդիսական և ուսումնակի պահերուք:

«Եարթուս մէջ Հայաստանեաց Կաթողիկէ Ուուրբ Եկեղեցոյ կատարած Սրբոց Թարգմանչաց Սահսկայ և Մեսրոպայ տօնախմրութիւնը՝ այսօրուան զպրցական հանդիսիս հետ ոչ միայն սոսկ զուգաղիպոթիւն մ'է՝ այլ և սերտ յարաբերութիւն և անխզելի կատ մ'ունի։ Իրենց սրբակեաց Վարուք և դիւցաղնական առաքինութեամբք այդ զցց փայլուն հայ աստրզներն՝ ոչ միայն խորաններու վրայ հաւատացելոց յարգանաց պաշտօնն ընդունելու արժանացեալ են, այլ և ազգիս կրթական և գրադիտական առպարիզին մէջ մատուցած ազնուական ծառայութեանց պատճառաւ վերանորոգիչ հայ գրական ոգւոյ և հիմնադիր ոսկեդարեան հանդիսի կոչուի լու։ Եթէ այսօր, ու ուսումնատենչ աշակերտը, մայրենի լեզուա գեղեցիկ բանախօսութիւններ ճառաերու, գրական ընսակիր ճառակներ տալու կարողացած էք, որու պարտական էք հիմնապէս, և թէ ոչ ընտրողական գեղեցիկ յօրինածառութեամբ և ողջամիտ ոգւով հայ գրականութիւնը հիւսած և իւր ամենագեղեցիկ գրից վերածող Սրբոց Թարգմանչաց երկասիրութեանց և տքնութեանց։

Այժման և իրաւ է ուրբեմն, որ ինչպէս ազգս Թորգումնեան իւր Խորհրդական և հոգեւոր վերածնող կը ճանաչէ զՍուրբն Գրիգոր, զԼուսառորիշն Հայաստանեաց աշխարհէի, նոյպէտ իւր մրրազան և ազգային գրականութեան վերանորոգող ճանաչէ Սրբոց Թարգմանչաց դասը, հայ երկնքին այդ գեղեցիկ բոյլքը. վասն որոյ միշտ չնորհապարտ զմեզ ճանաչելու ենք, և իրենց հանդէսը և յիշատակը ջերմ եռանդեամբ կատարել պարտինք, հետեւարտը վայելուշ և երախտագիտական սովորութիւն մ'է նաև մեր կը թական ընկերութիւններն, հանդէսներն, վարժարաններն իրենց անուանք յօրջորջել և վերապատուել, և տարուան մէկ օրը, և յաւէտ իրենց եկեղեցական տօնախմրութեան օրը, նաև զպրցական տօն մը կատարել։ Այսպէտ ոչ միայն մեր երախտագիտական պարտըն վճարած կը լինիմք, այլ և այսակիսի ազգօգուտ հանդէսներով հայ բանասիրոց ոգւոյն մէջ իրենց աւանդած գրականութեան փայլը և միանգամայն զգաստութիւնը անկեղծ և անվիշտ կը ստիճնք, տանց խեղութիւրելու հայրենատուր նախատիպը և իսկանգարելու նուիրական յատկանիշը, որով միայն կարող կ'ըլլանք ազգին ճշնարիտ ծառայութիւն մատուցանել, փոխանակ վես հասուցանելու, եթէ այլազգ վարուիմք։

Բայց, ինչպէս ի սկզբան անդ ըսինք, այս գպրցական հանդիսիս առթիւ շարակից պարտաւորութիւն մ'ալ ձեզ յիշեցնելու հարկն կը զգամք, որ արդէն ուրիշ առիթներու մէջ ևս յունկն հասարակութեանս յեղյեղելու անփոյթ չենք եղած, և արդարեւ իսկ եթէ սրբոց Թարգմանչաց գրական յօրինուածութիւնը և նոխութիւնը ճանաչելու, տեառնագրած ոսկեդարեան հանդիսին ճաշակը վայելելու, անոնց վառած բանասիրական ջահը անչէջ պահելու, վարժարանաց մէջ անոնց երկասիրութեանց ուսումնասիրութեամբը հայ գրագիտութիւնը մշակելու երջանկութիւնն ունիմք այսօր, ու թու արդեօք պարտական եմք. ու արդեօք մեր գարը այն ոսկեփայլ Մեսրոպական դարսուն հետ զօդած է։ ու մոխրոյ տակ ծանկենալ այն նուիրական հուրը վերսարին արծարծած, հայ գրագիտութեան խանգարեալ պատիկը իւր սկզբնատիպն վերածելուն պատճառ եղած. ով այն ժամանակաց գծնդակութեան և ներքին պառակատմանց պատճառաւ հայ գրութեան տաճարին

վրայ տարածեալ սևաթոյր քօղը բարձած և հորիզոնին վրայ շեղակուտեալ աղջամդին խաւարն և ամսերն փարատած և այսպիսի գպրցական հանդիսից փակեալ դռներն բացած է, եթէ ոչ Արծիւեան Արրահամու, որ յետոյ Արրահամ Պետրոս իլ. յորդորժնամբ մեր երանաշնորհ Նախորդն է եղած, որպէս նաև ժամանակակից երեկելի խաչատուր վարդապետի սերտ և մոներիմ բարեկամ Սերաստացի Կրօնաւորն և իւր հիմնած Միաբանութիւնը Այս, ուղղագուատ ունկնդիրք և միր աշակերտք, եթէ Միսիթար սրբակեաց և Հայրենասէր անձն իւր հոգեաչ և ազգօգուտ գործոյն ձեւանապիսած չըլլար, և Հանդիպած գծուարութեանցը դիմադրելով միրջապէտ իւր ուխտը չխատարէր, և իւր մորին մէջ Հարցմակերպած միաբանութիւնը Հիմնէր, համ եթէ Հայաստանի խոսկանացեալ մէկ կողմը երթաւու անեղ կաթողիկեայ կեդրոնի մը մէջ զայն Հաստատէր, և կաթողիկէ Եկեղեցւոյ գերագոյն Գլուխն և Գաչէն պէտք եղած օժանդակութիւնը, ոյժը և ձեռնուութիւնը շգտնէր, ուր պիտի մարտարդեօք մեր գրական վերանորոգութեան գործը և եթէ Կրկնաճիւզ Միսիթարեան միաբանութեան անխոնջ անդամք բրտնածնն աշխատանօք և Հաստատամիտ յարատեւութիւնամբ մեր թաղեալ կամ կորուսեալ գրական գանձերն տղիտութեան կամ ատելութեան ճիրաններէն հազար ու մէկ գծուարութեանմբ, ծախիւր և տքնութեամբ ագտաւուր, զանննը քննագատելու, համեմատելու և ստուգելու, դարուց աներուն զանազան եկէջքն և ճաշակն ճշգետը հետակաւ շըլլային կարեի պիտի ըլլամք հիմայ ընտիր ընտիր ազգային մատենագիրներ առանեն ունենալ, հայ գրականութիւնը մշակել, Հայագէտ ուսուցիչներ, վարժարանաց մէջ Հայ գրագիտութեան զարգացումը տեսնել, մարուր ոնով դրել և խօսիլ, և նոյն խական Եւրոպից գրական, բանասիրական և Հնախօսական հանդիսի անգուգական ծառացութիւններ մատուցանել, իւռ մեր ականջը կը հնչեն այն խօսքերն զոր քանի մը տարի սոյն պիսի գպրցական հանդիքի մը առթիւ արտօսանած էր գիւղուազաքիս Համազգայնոց նախկին բարողէը պերճախօս Եղիշէ վարդապետն, որ իւր համակրելի ձայնի կը գոչէր այս սրահին մէջ, թէ «Ասմեւան Հայ ազգը իւր գրական վերաբրոգութեան համար Միսիթար Արքակօր և իւր հաստատած Միաբանութեան պարտական է. ինչ որ ըսկն կամ գրին, այդ հմարտութիւնը պիտի մնայ կանգուն ընդ միշտ և անպարտ, և եթէ մենք լրենք քարինք պիտի աղաղակին», կը գոչէր շեշտալով այդ ճարտարախոս վարդապետը, վասն որոյ մեր երախտագիտութեան հաւասիք կաթիւր Արքակօր և իւր հեռուստ կրինելու հարկն կը զգամք մեծարոյ վարդապետին, որ այդ թէպէտ անուրանալի ճշմարտութիւնը հրապարակաւու արիարար քարողելու, քաջութիւնն ունեցաւ: իւր անկասկածերի վկասութիւնն ահա այսօր բարձր հերքում մէ այն վաստ որ ճգանց, վերջին ատահններս բարերազդաբար անհատականութեանց կողմանց կը նշանարուին Միսիթարեան միաբանութեան երկասիրութեանց, գասազքրց, վարժարանաց և ձեռնարկութեանց հակառակն կարելոր կը նշանարուին Միսիթարեան միաբանութեան երկասիրութեանց, ուստի Հայ անուան անարժուն այդ բերմանց պատճառաւ և առաւել նուիրական և կարելոր կը համարինք այս պարտանանաշութիւնը, որում ակնարկած էինք:

Այս, պարտ և պատշաճ է, որ ինչպէս Սրբոց Թարգմանչաց՝ նոյնէս Մեծին Միսիթարայ, որ Միսիթարեան միաբանութեան և գարուն հիմնադիրն է, և ազգային գրական վերաբրոգութեան սկզբնապատճառն, անուան և յիշատակին գպրցական տան և Հանդէս մը կատարուի, այդչափ արժանաւութիւնը գասազքրց, վարժարանաց և ձեռնարկութեանց հակառակն կարելոր կը դատենք այդ պարտաւորութիւնը, որը կ Մեծին Միսիթա-

րայ գտնուած հանգամանեքը, պարագաներն և միջոցներն ոչ այնչափ. նըւ պաստառոր և քաջակերական էին, ինչպէս Արրոց Թարգմանչաց ժամանակ:

Ահաւասիկ այդ են մեր իղձք և ուխտք. զվարինանք այդ շնորհապարտ զգածմանց հաւաստիքը ազգին բարերարին նոտիրելու, եթէ մենք զլանանք, մեր յաջորդք աւելի ուղղադտուք, աւելի ազգասէք, նոյն նորիրական պարտականութիւնը պիտի ճանաչեն և ազգավայել պայտոնն պիտի մատուցանեն. աւելի զերծ կանխակալ կարծիքներէ և նախապաշտրմունքներէ պիտի չդանդապի մերձակայ Հայ սերունդը խոստովանելու, թէ վերստին կաթողիկէ մասին, որու մէկ զաւակն էր Միսիթար Արքայ, պարտի վերագրել այս երրորդ գրագիտական վիրանորոգութիւնը և իւր գարարանաց և լարանաց մէջ Արրոց Մահակայ և Միսրոպայ արձաններուն բով Մեծի Միսիթար արձանն ես պիտի կանգնէ, պիտի ճանաչէ և խոստովանի ոչ միայն գրասկան այլ նույիրական և եկեղեցական անքակ կապը և անսնատ զօդը Միսրոպա-Մահակեան և Միսիթարեան գարուց մէջ, և ազգին ընդհանրութեան չախն լաւ ևս գնահատելով զազդն համօրէն նոյն ոսկի օղակին կապելու ջանադիր պիտի ըլլոյ: Զնեզ կը պատկանի մեծարոյ Միսիթարեան միարանից աշակերտացդ, որք հոս ներկայ էք, կամ ի սփիւսս աշխարհիս կը գտնուիք, որ կողման որ պատկանիք, ձեզ՝ որ անոնց բերնէն կամ երկսափրութենէն սորված էք հոյ լեզուն և գրականութիւնը, իւր պատմութիւնը և խանչը, ձեզ կը վայելէ Միսիթար Արքահօր անուան և յիշատակին ամենէն աելի նսխանմանքիր ըլլայ. և Եւրօպիոյ երեսելի յարանաց գեղեցիկ սովորութեան համեմատ, գարցական ակունքն և միաւթիւն հաստատել, և այսպէս մեր ընդունած կրթութեան և ողջամիտ գասա տիրապետթեան հաւաստիքը ևս յաւերգացնել, եթէ կուզեք ազգիս ընդհանրութեան ընտիր ծառայութիւն մը մատուցանել:

Այլ արդ Մեր բանախօսութիւնը կը կնքեմ նույիրական ուրիշ պարտառութիւն մը կատարելով, այն է եռանդազին ուկատեր ուզգել յերկինս վաս սրբ բարօրութեան անզին կենաց. մեր Օգոստափառ Կայսեր, որ իւր կըրթասէր նախանձով՝ իւր լոյնուտարած պետութեան սահմանաց մէջ, ուսմունքը և կրթութիւնը յառաջադէմ վարելու համար ամենայն ճիզ և փոյթ ի գործ կը դնէ, իւր հպատակ հասարակութեանց լուրջ և գգասա կրթական շարժման պաշտպան և թելագիր կը հանդիսանալ, և չուզեր որ ստորին պաշտօնեալք ծայրաց ել ըբանամբ անոր ծաւալման խոշընդուն ըլլան. այս, իւր հպատական թագին գոհաներէն ամենէն մեծ փայլը կրթական ջահուն վառվուուն ճառագայթիներն են. Պահէ մեզ երկինք յամսար ամս մեր բարեգութ և հպատակասէր նինժակալը, որուն բարձր հովանաւորութեան ներքը զգաստ դրութեամբ մը, և հայ ազգին աւանդական եղող հպատակութեան և հաւաստարմութեան հաւաստեօքը կարող ենք ամենայն վստահութեամբ մեր վարժարանաց մէջ մեր լեզուն և գրականութիւնը մշակել, և այսպէս տոհմային պահպանութիւնն ալ ապահովիլ: Կեցցէ՛ ուրեմն Օգոստափառ Կայսրն մեր Սուլթան Ազտ-իւլ Համիտ խան, կեցցէ՛ իւր տէրութեան և իւր սիրելի Հայ ազգին բարօրութեան համար »:

Ի Քաջկեդոն, առթիւ հանդիսի Պարգևաբաշխութեան աշակերտաց Միսիթարեան վարժարանի, 2/4 Յուլիս 1889: